ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

"14" փետրվարի 2024թ. N 255-Լ

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՏԱՐԱԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական գաղտնիքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 698-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունների ներքին գործավարության կարգը՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

2/14/2024

X

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Signed by: HAYRAPETYAN MKHITAR 2505901047 ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2024 թվականի փետրվարի 14-ի N 255- Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՏԱՐԱԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունների ներքին գործավարության կազմակերպումն ու իրականացումը:

2. Սահմանափակ տարածման ծառայողական տեղեկության տեղեկակիրների վրա կատարվում է «ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ» (այսուհետ՝ «ԾՕՀ») նշումը:

3. «ԾՕՀ» նշումով տեղեկությունների ներքին գործավարությունը կազմակերպում է Նախարարությունում գործավարության համար պատասխանատու ստորաբաժանումը՝ Նախարարության գործերի կազմակերպման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն)՝ Նախարարությունում գործող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության (Mulberry) համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով:

4. Նախարարությունում «ԾՕՀ» գործավարության հսկողությունն իրականացվում է Նախարարության գլխավոր քարտուղարի կողմից (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար):

5. «ԾՕՀ» նշումով գրությունների՝ սահմանված ժամկետում կատարման նկատմամբ ընթացիկ հսկողությունն իրականացնում է Վարչությունը՝ առնվազն շաբաթը մեկ անգամ Գլխավոր քարտուղարին ներկայացնելով համապատասխան տեղեկատվություն:

2. «ԾՕՀ» ՆՇՈՒՄՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ

6. «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնների շրջանակը սահմանափակ է՝ տեղեկությունների արտահոսքն ու հրապարակումը բացառելու նպատակով:

7. Վարչությունում «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնների շրջանակը որոշում է Վարչության պետը՝ կապված աշխատանքների ծավալից:

8. Յուրաքանչյուր ստորաբաժանման ղեկավար իր ստորաբաժանումից առաջադրում է «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնների տվյալները և ներկայացնում համակարգող փոխնախարարի և(կամ) Գլխավոր քարտուղարի համաձայնեցմանը, որը հաստատվում է Նախարարի կողմից: Ընդ որում՝ պաշտոնների տվյալները ներկայացելիս առաջնահերթությունը տրվում է պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու թույլտվության ենթակա Նախարարության աշխատողների պաշտոնների հաստատված անվանակարգության մեջ ներառված պաշտոններին և(կամ) սահմանված կարգով գաղտնի տեղեկություններին առնչվելու թույլտվություն ստացած աշխատակիցներին:

9. Նախարարության ղեկավար կազմի, ինչպես նաև Նախարարի աշխատակազմի «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնները հաստատում է Նախարարը:

10. Յուրաքանչյուր ստորաբաժանման «ԾՕՀ» նշումով փաստաթղթաշրջանառության կազմակերպման, վարման և սահմանված ժամկետներում կատարման համար պատասխանատու է տվյալ ստորաբաժանման ղեկավարը:

11. «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվող պաշտոնատար անձանց փոփոխության դեպքում ստորաբաժանումների ղեկավարները եռօրյա ժամկետում տեղեկացնում են Վարչության պետին՝ համապատասխան ընթացքն ապահովելու համար:

3. «ԾՕՀ» ՆՇՈՒՄՈՎ ՄՏԻՑ ԵՎ ԵԼԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

12. Նախարարությունում «ԾՕՀ» նշումով փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2021 թվականի մայիսի 30-ի N 501-Լ հրամանով սահմանված կարգին համապատասխան՝ այնքանով, որքանով չի հակասում սույն կարգին:

13. Համակարգի «Վերնագիր» բաժնում, ինչպես նաև «ԾՕՀ» նշումով մտից և ելից փաստաթղթերի վերին աջ անկյունում կատարվում է «ԾՕՀ» գրառումը:

4. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ «ԾՕՀ» ՆՇՄԱՆ ՇՆՈՐՀՈՒՄԸ

14. «ԾՕՀ» նշման անհրաժեշտությունը որոշում է այդ փաստաթուղթը կատարողը և ստորագրելու կամ հաստատելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

15. Արգելվում է «ԾՕՀ» նշումով տեղեկության շարքին դասել պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները, ինչպես նաև՝

1) Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, իրավաբանական անձանց իրավական կարգավիճակը, ինչպես նաև անձանց իրավունքները և ազատությունները, դրանց իրականացման կարգը սահմանող իրավական ակտերը,

2) Իրավաբանական և ֆիզիկական անձանց դիմումների և հանրագրերի քննարկման և դրանց արդյունքներով որոշումների կայացման կարգերը,

3) Սահմանված կարգով քննարկված իրավաբանական և ֆիզիկական անձանց դիմումների և հանրագրերի վերաբերյալ կայացված որոշումները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

4) Անձանց իրավունքների, ազատությունների, պարտականությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք պահվում են բաց տեղեկատվական համակարգում,

5) Բյուջեի կատարման, տնտեսության և բնակչության կարիքների վիճակի մասին տեղեկությունները,

6) Մարդկանց անվտանգության և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերի, աղետների, ինչպես նաև տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետների, դրանց հետևանքների մասին տեղեկությունները,

7) Տնտեսության, մասնավորապես Նախարարության իրավասությանն առնչվող ոլորտների ընդհանուր վիճակը ներկայացնող տեղեկությունները,

8) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակման փաստերի, հանցագործությունների վիճակագրության մասին տեղեկությունները,

9) Պետության կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, պաշտոնատար անձանց, կազմակերպություններին տրամադրվող արտոնությունների և սոցիալական երաշխիքների մասին տեղեկությունները,

10) Այլ տեղեկություններ, որոնք օրենսդրությամբ ենթակա են պարտադիր հրապարակման:

5. «ԾՕՀ» ՆՇՈՒՄՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

16. Համակարգում ներառված «ԾՕՀ» նշումով ցանկացած փաստաթղթի հասանելիության նկատմամբ սահմանափակումներ կարող են կիրառվել մինչև հինգ տարի ժամկետով:

17. Հինգ տարին լրանալուց հետո «ԾՕՀ» նշումով տեղեկության հասանելիության նկատմամբ սահմանափակումները հանվում են:

18. «ԾՕՀ» նշումով տեղեկություններին առնչվելու իրավունք ունեցողները ցանկացած ժամանակ Համակարգից կարող են մտից կամ ելից համարներով փնտրել և գտնել միայն իրենց վերաբերելի փաստաթղթերը կամ նյութերը:

19. Ծառայողական անհրաժեշտությունից ելնելով՝ «ԾՕՀ» նշումով, սակայն իրեն չվերաբերող փաստաթղթերին Համակարգից օգտվողը կարող է ծանոթանալ միայն Նախարարի կամ նախարարի տեղակալի կամ Գլխավոր քարտուղարի համաձայնությամբ՝ իր կողմից ներկայացված զեկուցագրի հիման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց անմիջականորեն առնչվելու իրավասությունը նախատեսված է այլ իրավական ակտերով:

6. «ԾՕՀ» ՆՇՈՒՄՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

20. «ԾՕՀ» նշումով տեղեկությունը չի կարող հրապարակվել (տարածվել)՝ առանց այդ տեղեկությունը պարունակող փաստաթուղթը ստորագրելու կամ հաստատելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի թույլտվության:

21. Սույն կարգի 14-րդ կետում նշված՝ ստորագրելու կամ հաստատելու իրավասություն ունեցող անձի կողմից կարող է թույլատրվել սահմանափակ տարածման տեղեկության հասանելիությունը տվյալ մարմնի աշխատակից չհանդիսացող այլ անձանց՝ իրենց հայտնի դարձած տեղեկությունը չհրապարակելու կամ երրորդ անձանց չհայտնելու պայմանով, որը պետք է ձևակերպվի գրավոր:

22. «ԾՕՀ» նշումով տեղեկատվությունների հրապարակումն այդ տեղեկությունների հանրայնացումն է այն անձի կամ անձանց կողմից, որոնք իրենց իրավասության սահմաններում առնչվել են այդ տեղեկությունների հետ և դրանք ցանկացած ձևով մատչելի

են դարձրել այդպիսի տեղեկություններին առնչվելու թույլտվություն կամ իրավասություն չունեցող անձանց:

23.«ԾՕՀ» նշումով տեղեկությունների հրապարակման կամ հոսակորուստի դեպքում դրանք հայտնաբերող պաշտոնատար անձը դրա մասին զեկուցում է Գլխավոր քարտուղարին և(կամ) Նախարարին:

24. «ԾՕՀ» նշումով տեղեկությունների հրապարակման հանգամանքները պարզելու նպատակով Նախարարի կամ Գլխավոր քարտուղարի հրամանով կարող է նշանակվել ծառայողական քննություն:

25. «ԾՕՀ» նշումով տեղեկություն հրապարակած անձանց նկատմամբ կիրառվում է կարգապահական տույժ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: